№ 3 ԹԻՖՐԱՆ ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐ 4 1895 ԹԻՖՐԱՆ ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐ 4 № 3

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի։

Արտասահմանից փոխի համար պիտի դիմել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մին չէն 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի սնդամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։ Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՇԱՐԱԿՆԱՎՈՒՄ Է ԲԱՑԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

«ՇԱՒԻՂԸ» հրատարակվում է Թէհրանում նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։ «ՇԱՒԻՂԻ» բաժանորդագինն է մէկ թուման, կէստարուանը վեց ղրան։ Արտասահմանում՝ 3 ռուբլի կամ 8 ֆրանկ, կէս տարուանը 2 ռ. կամ 4 ֆրանկ։

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետևեալ հասցէով, Téhéran, Rédaction „CHAVIGH„.

Մեր գործակալներն։ Սալմասում՝ Յովհաննէս Ապրէսեանց, Արարատիում՝ Յակովբ Էլչիբէկեան. Նոր-Ջուղայում Յովսէփ Բարսեղեանց. Բուշիրում՝ պ. Կ. Զէյթունեան Մարաղում՝ Մելքոն Խալաթեանց. Ռաշտում՝ Ալէքսան Յովսէփեանց. Համադանում՝ Յակոբ Յակոբեանց։

Ասլառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երբ պիտի խրատիւնք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ռաշտից։ Նամակ Դավրէժից Նամակ Շիրազից. Նամակ Դավրէժից. Նամակ Ուրմիայից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի Տեսութիւն. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—Առաքինութեան մրցանակներ։

ԵՐԲ ՊԻՏԻ ԽՐԱՏԻԵՆՔ

Լուր է հասել Սպահանից, որ մի վարդապետ գալու է Թէհրան, «կարգի դնելու» ազգային տակն ու վրայ եղած գործերը։

Ազգային գործերի տակնուվրայութիւնը զզուեցրեց բոլորին։ Ինչո՞ւ ուրեմն բուքանդ են եղել ազգային գործերը։

Դժբաղդաբար, այդպիսի ստրկական, պաշտպանութիւն փնտռելու և թելադրութեան տակ գործելու յատկութիւնը միմիայն Թէհրանցին, միմիայն պարսկահայը չէ որ ունի, այլ հայ ազգի ամենամեծ մասը։ Թոյլ օրգանիզմներին և տկար մտքերին է յատուկ նեցուկ և խնամակալ մուրալու սովորելի դիրքը։ Այդպիսի օրգանիզմներն, այդպիսի թշուառ մտքերը, զուրկ ինիցիատիվական ոգուց, նմանում են այն կոյրերին, որոնք խորխորատը կընկնեն, եթէ չառաջնորդուին ուրիշից։

Ի՞նչու համար հայը վերջապէս չէ կարողանում ըմբռնել, որ կղերի միջամտութիւնը կրթական և այլ այդպիսի գործերի մէջ եղել է միշտ վնասաբեր։ Պատմութեան մէջ քի՞չ օրինակներ կան։ Նատ հեռու չէ Կովկասը, ուր ժողովրդական կրթական գործերը խաղալիք են եղել հայ հոգևոր իշխանութեան և նրա գարբնած թեմական տեսուչ—Բենիկ աբեղաների ձեռքում... Ինչո՞ւ գոնէ մի անգամ հարց չը տանք մեզ թէ ինչ նպատակով եղան Եւրոպայի մէջ կատարած այն բարեփոխութիւնները, որոնք խլեցին կրօնաւորութեան իրաւասութիւնից հասարակական բոլոր գործերը։ Հայկղերը նոյնն է, ինչ որ եղել է. նոյնը կը լինի ինչ որ է. ի զուր է կարծել, որ եթէ կրթուած անդամներից բաղկացած լինի, լաւ կը վերաբերուի դէպի այնպիսի հիմնարկութիւնները, որոնք կարող են տալ հասարակութեան համար ինքնաճանաչ, գիտակցութեան տէր սերունդներ։

Կղերը գիտակցութեան այնպէս թշնամի է, որպէս գիշերային թռչուններ՝ լոյսին։ Մի փաստ է այս, որ հիմք ունի իրեն համար ամբողջ պատմութիւնը։

Բայց հայը ոչ անցեալի ակներև հետևանքներից խրատուել գիտէ, ոչ դրացի ազգերի օրինակներից և ոչ էլ իր միւս եղբայր հասարակութիւնների կրած վնասներից։

Էլ ե՞րբ ուրեմն, ո՞ր դէպքումպիտի կարող լինենք ցոյց տալ, որ հայն էլ կարող է ունենալ ինիցիատիվական ոգի և քայլ առնել առանց թելադրութեան, առանց կրօնաւորի առաջնորդութեան։

Ե՞րբ ուրեմն կարող պիտի լինենք, մենք ինքներս, քայլել այն ճշմարիտ ճանապարհով, որ տանում է դէպի գիտակցութիւն ու գիտութիւնը։

Դոնէ կրթական գործը և գիտութիւնը ազատենք կղերի ոտքի տակից, ուր նա շղթայած կայ. ազատենք նրան, որովհետև նա է այն միակ միջոցը որ պիտի ջնջէ մեր մտային հիւանդ դրութիւնից գոյացած նախապաշարումներընա է որ պիտի բանայ մեր աչքերը՝ ճանաչելու համար մեզ տգիտութեան մէջ պահելով օգտուողներին. նա է, որ պիտի ազատէ մեզ մեր ուղեղը կաշկանդող շղթաներից....

Հ. Ֆ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

Ակադեմիան՝ յարատև, անրուժելի և նոյն ինքն ժառանգական առաքինութիւններն է միայն վարձադրում, որովհետև այս տարի մրցանակ տուաւ սքանչելի մի ընտանիքի վերջին շառաւիղին, մի ընտանիքի, որ կէս դարից աւելի, ամբողջովին անձնատուր է եղել գիտութեան մեծ գործին։

«1849-ին Պետերբուրգի ֆրանսական բարեգործական ընկերութիւնը Տիկին Մարդրիտ Ժանլոնի էր յանձնում ծերերի և որբերի համար հիմնած ապաւինատան վարչութիւնը, Տիկին Ժանլոն 1854-ին մեռնելով, իրեն յաջորդեց իր աղջիկը, Օրիորդ Մարի Ժանլոն, որ այն ժամանակ 23 տարեկան էր։ Իր Թէրէզ և Կատէրին քոյրերի հետ, օրիորդ Մարի իր ամբողջ կեանքը նուիրեց խնամելու այդ ինքնեռ ծերունիները և կրթելու այդ պղտիկ որբերը որոնցից պաշտվում էր և որոնք սրտհապան հրեշտակ էին կոչում նրան։ 1880-ին մեռաւ. իր Թէրէզ քոյրը նրանից յետոյ չորս տարի շաղրեց, և Օրիորդ Կատէրին Ժանլոնի մնաց ժառանգութիւնը այդ որի աղջիկներին, որոնք պանդխտութեան մէջ ծնում էին և մեռնում սփոփելու համար հիւանդները և լքեալները։ Օրիորդ Կատէրին Ժանլոն այսօր տակաւին միայնակ տեսչուհին է այդ տան, որ, իր գործունէութեան եւ անձնուիրութեան շնորհիւ, բոլորովին արժանի է դիտելի Ֆրանսայի։ Երբոր ապաւինատան տեսչութիւնը առաւ, պնդոտ պարեալների բնակած փայտաշէն և հնացած շէնքերը անրաւական էին եղել հոգաբարձութիւնը որոշեց Պետերբուրգի մէջ քարուկիր մեծ մի շէնք կառուցանել, որի մէջ պիտի դնուէին ապաւինատունը, մի մատուռ, մի մաքրանոց, մի դպրոց եւ ապաստանարան։ Օրիորդ Ժանլոն, թէպետ հիւանդկոխ ու արդէն տարիքը առած, կարողացաւ ի դուխ հանել այդ մեծ ձեռնարկը այն կորովով, որ գթութեան ոգին միայն կարող է տալ։ Օրիորդ Ժանլոն, որ այսօր եօթանասուն տարեկան է, միշտ հոգին է այդ տան, ուր ամենից սիրվում է եւ մեծարվում իր արիասիրտ ընութեան համար։ Առաջին անդամն է որ Ակադեմիան մրցանակ է տալիս Ֆրանսայից դուրս կատարած գործերի համար, բայց մտածեցինք և վստահ ենք թէ ամեն մարդ մեզ պէս պիտի մտածի, թէ Պետերբուրգի Ֆրանսական Ապաւինատան տեսչուհին տրուած մի վարձատրութիւն չի կարող օտար երկրի տրուած վարձատրութիւն նկատուել։

«Մինչև հիմա կանանց անուններ յիշեցի։ Պէտք է ամենայն խոնարհութեամբ խոստովանուիլ պարոններ, որ այս տարի սովորական պէս եւ իրաւամբ՝ կիներին է գնում Ակադեմիային շնորհած վարձատրութիւնների մեծագոյն մասը։ Արժէ յիշել սակայն այդ մարդիկ, որոնք գրեթէ կանացի զորովով ու քաղցրութեամբ՝ գթոտ անձնուիրութեան ու որդիական սիրոյ հրաշալի գործերեն կատարել Ունինք նաև ազատարարները, որոնցից մէկը Քրնէլ, մասնաւորապէս արժանի է մեծարանքի։ 1870—1892, Քրնէլ, որ Ֆրանվիլի նաւահանգստի մէջ նաւուղիղ է, տաս անդամ նշանաւոր է եղել դիւցազնական անձնուիրութեան գործերով։ Մի դէպք միայն յիշեմ։1892 նոյ. 20-ի գիշերը, ահռելի մի փոթորիկ՝ եղերք էր նետել Էգալիթէ նաւը։ Նաւաղները յոգնել էին նաւարկութեան տանջանքներից և կայմերի մէջ անցած մի գիշերի յոգնութիւնից Քրնէլ մի մակոյկ նստաւ, եւ իր արութեամբ, ամենից մեծ վտանգների մէջտեղ, եօթանասունհինգ հոգի ազատեց։ Կա-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՌԱՇՏԻՑ

21 յուն. 95

Երէկ, յուն. 20-ին, երեկոյեան ժամը 5-ին, Ռաշտ մուտք գործեց գեներալ Կուրապատկինը, որ Անդրկասպեան երկրի կառավարիչն է, և որը, արդէն լսած կը լինէք, իբր արտաքոյ կարգի

դեսպան ռուսաց կողմից, Թէհրան պիտի գայ, ասում են, որ մի և նոյն ժամանակ և Վ. Շահին պիտի շնորհակալութիւն յայտնելու, ռուսաց կառավարութեան կողմից այն ցաւակցութեան համար որը յայտնել է պարսից կառավարութիւնը Ալէքսանդր III կայսեր մահուան համար։

Ընդունելութիւնը շատ շքեղ էր, Կուրապատկինին Էնզելիից ուղեկցում էին Բէկլարբէկին մաքսատան կապալառուն որ մի և նոյն ժամանակ և Էնզելիի քաղաքապետն է, Ամիդ-Սալթանէն, պարսիկ-ռուսական սահմանապահ կառավարիչը և ուրիշ պետական պաշտօնեաներ։

Թէհրանից ուղարկուած կոզակները և զինուորները դիմաւորել էին քաղաքի դրսում ճիշտ ժամը 5-ին մեծ հանդիսով քաղաք մուտք գործեց։

Այդ օրը քաղաքը շարժման մէջ էր, ամեն տեղ նկատվում էր պարսիկների ստուար բազմութիւն. հայերից շատերը դիմաւորել էին դեսպանին, որը նրանց տեսնելուն պէս մի քանի բոպէ խօսակցեց, հարցնելով ամեն մէկի պարապմունքը։

Այնտեղ, որտեղ պիտի իջևանէր դեսպանը, կանգնած էր պետական զինուորական երաժիշտների խումբը։

Միով բանիւ մեծ պատուով ընդունեցին։

Ա. Յովսէփեան

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

(քաղուած մի մասնաւոր նամակից)

28 նոյ. 84

....Լիլավայի ուսուցչական խումբը իր ժամանակին կազմակերպուած չը լինելու պատճառով, մի քանի թիւրիմացութիւններ պատահեց տեսչի և հոգաբարձութեան մէջ որոնք, ի դէպ է ասել, առիթի են մաս գալիս, որ այսպէս կամ այնպէս, անհամութիւններ առաջացնեն։ Նրանց այդպէս վարուելուն բաւականաչափ նպաստում են դալացիները (մի քանի հոգաբարձուք և ուսուցիչների մեծ մասը)։ Եթէ ի նկատի ունենաք, որ այդ ուսուցիչներից 6 հոգի վռնտուած էին դպրոցից և ամենախայտառակ կերպով և ստորանալով կրկին ընդունեցին դպրոցը, և որովհետև իրանց վռնտուելու պատճառը համարում են Լիլավայի տեսուչը, ուստի և պարզ է թէ ինչու են նրանք աշխատում Լիլավայի դպրոցի անդորը կեանքը խանգարել։ Միւս կողմից զգալով, որ իրանց թագաւորութիւնը Դալայի դպրոցում երկարատև չի լինելու, այժմեանից պաշտօնները իրանց մէջ բաժանել են Լիլավայի դպրոցը աչքի առաջ ունենալով։

Այդ բոլորը այնքան կամ բոլորովին զգալի չէր լինել, եթէ Լիլավայի հոգաբարձութեան մէջ զէթ մի կանոնաւոր մարդ լինէր։ Նախ, այդ հոգաբարձութիւնը բաղկացած է չորս անձինքներից, որոնցից մէկը յայտնի տէր—Թոդիկեան համալսարանից դուրս եկած նախկին մանկավարժն է, միւսը նրա մի ազգականը, որ մանկավարժի ստուերն է և նրա արձագանքը, երորդն է մի պարոն, որ դպրոցի գործերի վրայ վաճառականական աչքով է նայում և վախենում է որ իր առևտրին վնաս կ'հասցնի հոգաբարձութեան զօրեղ անդամը, միւս կողմից էլ բարեկամ է յայտնի մի աւարտած ճեմարանականի, որ և գրգռում է բոլորին և լարում Լիլավայի ուսուցիչների դէմ։ Չորրորդ հոգաբարձուն, թէպէտ լաւ և ազնիւ, բայց առանց եռանդի և ոյժի մարդ է։ Մինչև այժմ այդ թաղը ոչ հինգերորդ հոգաբարձուն է ունեցել և ոչ էլ երեցփոխ։

Սակայն, որքան որ լինին ազնիւ մարդիկ, նրանք այնքան կախում ունին հոգաբարձութեան մէջ ամեն բան իր բրոնակալական ձգտումների տակ ճնշող տէր Թոդիկեան նախկին ուսուցչից, որ եթէ սա մի անգամ գոռաց, միւսները բոլորը կծկվում են։

Այժմ այդ մանկավարժը հոգաբարձութեան հետ (տեսաք ինչպէս հոգաբարձուներ) մտադիր է դպրոցի ծրագիրը հաստատել. մարդ չը գիտէ նոցա այդ վարմունքի վրայ ծիծաղէ թէ բարկանայ։

Ամեն անգամ աշխատում են ստորացնել—այսպէս ասած «խոնարհ պահել»—ուսուցիչներին, ստորացնել ամեն քայլում, իսկ դպրոցի թշնամիները ամենայն օր մի շինծու բան են տարածում ժողովրդեան մէջ ուսուցիչների մասին և հոգաբարձութիւնը փոխանակ ստուգելու և զրպարտիչների բերանը փակելու ինքն ևս նպաստում է այդ լուրերի տարածման և սկսում է ուսուցիչների ետևիդ մեջտեղ, բանսարդել նրանց։

Մի խօսքով անտանելի են և ես դոնէ լաւ վախճան չեմ գուշակում. այնքան զզուացրել են ուսուցիչներին, այնքան անկիւններից զզուելի լուրեր հասցրել նրանց ականջին, որ ամենայն իրաւամբ այսուհետև ոչ մի կանոնաւոր ուսուցիչ չէր կամենալ Դավրէժում պաշտօն վարել։ «Շաւղի» վրայ ճնշում մի գործէք, թողէք որ մեր հոգաբարձութեան պատկերը դուրս բերի և զանազան մարդկանց թղթակցութիւնը ամբողջովին տըպագրի. Գուցէ մեր պարոնների վրայ տպագրական թանաքը ազդէ... Թէպէտ կասկածում եմ...

ՆԱՄԱԿ ՇԻՐԱԶԻՑ

—

9 յունվար 95

Շիրազու եկեղեցապատկան տների անվարձ մնալու, կառավարչաց անգործունէութեան և քահանայի մասին ձեր 47 համար թերթի մէջ կարդացինք. թէ և համառօտ էր, սակայն բաւականին ազդու և կարծեմ, եթէ խղճմտանքով մարդ լինի, այդքանն ևս բաւական է, ցաւալի է որ թէ մեր հոգևորականները և թէ աշխարհականներս բոլորովին անհոգ ենք։ Հոգևորականք զբաղուած են գինու կարասներ խառնելով, իրանց հօտը չոր և ցամաք երկրների վրայ արածացնելով մի և նոյն ժամանակ այդ խեղճ հօտէն կաթ և բուրդ խլելով։ Զարմանում ենք թէ ինչու՞ ն. ը. սրբազնութիւնը իր ուշադրութիւնը չի դարձնում փոքր ինչ էլ Շիրազու ազգային գործերի վրայ. գործեր, որոնց դրութիւնը կատարելապէս անմխիթար է։

Յ.

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

22 յուն. 95

Մօտ մի տարի է որ այստեղի Ընթերցարանական ընկերութեան տեսուչ է նշանակուած պ. Ալէքսանեան։ Ասում եմ նշանակուած և ոչ թէ ընտրուած։ Առհասարակ ամենքին յայտնի է, որ իւրաքանչիւր հաստատութեան կամ ընկերութեան վարչութիւն ընտրում է քուէարկութեամբ. բայց մեր ընթ. վարչութեան տեսուչը ընտրուեց միմիայն թեմիս առաջնորդ Սուքիաս եպիսկոպոսի ձեռքով. վարչական ընտրութեանց համար սահմանուած այդ օրէնքը խախտուեց։

Այդ մասին ծագած տարաձայնութիւնները ժողովրդի մէջ «ձայն բարբառոյ» մնացին։ Մի ամբողջ տարի առաջնորդը ուշադրութիւն չը դարձրեց ժողովրդի իրաւացի պահանջքին. բայց Սրամեան դպրոցի նորընտիր հոգաբարձութիւնը բռնի հրաժարեցրեց այդ պարոնին թէ տեսչութիւնից և թէ «Կոնսիստորիայի» քարտուղարութիւնից (վերջին պաշտօնն էլ առաջնորդն էր շնորհել)։ Մօտ մի ամիս է, որ սպասում ենք այդ պարոնի հեռանալուն. բայց, երևի, պարոնի կաշին այնքան հաստ է, որ մտրակի հարուածները նրա մսին չեն ազդում. Աշղեանի երեսից պինտ երես ունի։

«Թեմական ատեանի» գործունէութիւնից հետևեալը միայն. Մուժամբար գիւղում երեք տարի է, որ պ. Մ-ի մի ազգականը նշանուած է մի աղջկայ հետ նոյն գիւղի տէր Մկրտիչ քահանայի մի ջոցաւ։ Այդ տգէտ քահանան, որը այժմ «թեմ. ատեանի» անդամ է, մի անձնական ատելութիւն ունենալով յիշեալ պ. Մ-ի հետ, այդ նշանադրութիւնը չէր համարեց, իսկ ս. առաջնորդն արգելեց պսակը և հրամայեց նշանը լուծած համարել. երևակայեցէք գիւղացոց կատաղութիւնը և իրաւացի զայրոյթը։ Մ'թէ երեք տարուայ նշանը կարելի է քանդել մինչդեռ այդ նշանադրութիւնը կատարուելէ օրինաւորապէս. նոյն իսկ «թեմ. ատեանի» անդամի ձեռքով։ Սրբազանը 50 թումանների յոյսը այդ խեղճ գիւղացիներից պիտի կտրի. նրանք «զուան» անգամ տալ չեն կարող։ Ինչպէս լսում ենք, գիւղացիք ուզում են մի բողոքական քարոզչի ձեռքով կատարել այդ պսակը։ Հոգևոր բարձր իշխանութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում այդպիսի երևոյթների վրայ։

Դալա թաղի հոգաբարձութիւնը կա-

ռավարութիւնը Քընէլին էր տուել ինչ որ կարող էր տալ՝ արծաթ շքադրամ, ոսկի շքադրամ, Պատուոյ-Լէգիոնի խաչ, եւ գրեթէ յաջորդ օրն այն օրուան, որ Ակադեմիան՝ իր կարգին՝ մի մրցանակ էր տալիս նրան, մահը խլեց նրան»

Ակադեմիան այս տարի իր մեծագոյն վարձադրութիւնը (2500 ֆրանք) նուիրել է մի գիւղի քահանայի, որ 1870-ին, ֆրանք գեր մանական պատերազմի ժամանակ Լուանների մէջ ճշմարիտ դիւցազնութեամբ, իրանձը նուիրել է վիրաւորներ դարմանալու գործին, և այն ժամանակից ի վեր՝ ամեն տեսակ յոգնութիւն յանձն առնելով՝ 240,000 ֆրանք է հաւաքել եւ մի եկեղեցի է կառուցել Լուանների ճակատամարտի դաշտի վրայ, ուր միասին հանգչում են 1,200 ֆրանսացի, սպայ և զինուոր, դաւակ ֆրանսայի ամենից խոնարհ և ամենից մեծ ընտանիքների։ Ակադեմիայի նուէրը պիտի ծառայի սրբելու եկեղեցու վերջին պարտքերը։

Ակադեմիան նոյնպէս 2,000 ֆրանք նուիրեց Օրիորդ Պէրթիլ Պէռդանի, որ իր ամբողջ ունեցածը նուիրելով՝ Արլի մէջ բացել է մի ապաստանարան ուր այսօր պատսպարուած են 70 ծերունի։ Օրիորդ Պէռդան, որ այսօր 63 տարեկան է, տակաւին աշխատում է իրը ժանեակի շրջուն վաճառական ի հաշիւ գործարանների, եւ իւր ամբողջ վաստակը ապաստանարանի համար է։ Այնպիսի մի չքաւորութեան մէջ է ապրում որ ամենից առաջ ինքը պէտք է պատսպարուէր իր հիմնած ապաստարանի մէջ։ Ակադեմիայի նրան նուիրած գումարը՝ նորէն իր ծերունիներին պիտի երթայ։

Պ. Լիւտովիզ Հալէվի է՝ օսք վերջացրեց այսպէս։

«Ցաւընդունդ տարի առաջ, մեր միջից նախագահելով մեր տարեկան ժողովին, իր ատենաբանութիւնը սկսում էր այս խօսքով. Տարուայ մէջ մի օր կայ, պարոններ, երբ առաքինութիւնը վարձատրվում է դա շատ սրբամիտ էր,—եւ այդ խօսքը մեծ յաջողութիւն թիւն գտաւ,—բայց բոլորովին արդար չէր։ Մենք յաւակնութիւն չունենք վարձադրելու բառին անձուկ իմաստով՝ գործեր որոնք ամէն վարձատրութիւնից վեր են։ Ակադեմիայի շնորհած՝ մրցանակները աւելի լայն եւ աւելի բարձր մի նշանակութիւն ունին։ Նրանք որոնց տալիս ենք այդ մրցանակները, փառքի տենչացող են։ Ողորմած մարդը լռութիւն և ստուեր է սիրում, մէկ փափագ, մէկ հրճուանք ունի, այն է միջոցներ գտնել որպէս զի գործը տեւի եւ ընդարձակուի։ Բայց ներելի է մեզ մի քիչ լոյս-աշխարհք բերել այն անձերը որոնց պատվում ենք եւ մեզ երախտապարտ պիտի լինին, որ աշխատում ենք նրանց դատին յաջողութեան համար որ իրենց գործերը պատրուակ բռնելով՝ հրապարակային մի յարգանք մատուցանենք Դթութեան։ Դա իր օգուտը և իր կարևորութիւնն ունի, մանաւանդ մեր ապրած ժամանակիմէջ։ Ասում են գթութիւնը նուաստացնում է թշուառութիւնը, և թէ ամէն բան պէտք է արդարութենից սպասել։ Բայց գթութեան համար միշտ տեղ կայ ընկերութեան մէջ։

«Գթութիւնը մի հիւանդութեան պէս է գալիս. ողորմած մարդու համար՝ տալը ապրել է. հարուստ է, սնանկանում է. սնանկացել է աւելի լաւ դրանով աւելի է մօտենում նրանց որոնց նա մխիթարում է, էլ չի կարող տալ մուրացկան է լինում, էլ ինքն իր համար հաց չունի. ամէն օր հացերի բազմապատկութեան հրաշքն է գործում։ Ու հարստանալու համար մի մեթոտ է գտել որ պիտի զարմացնէր շատ մարդիկ.--- անդադար տալ։ Ոչ, երբէք գութը անպաշտօն չպիտի մնայ աշխարհիս մէջ»։

«Հայրենիք»

ղող էր բաւականին անաչառ գործել, եթէ այստեղ էլ բէյերը մուտք դրած չը լինէին։

Ամսոյս 14-ին Լիլավայ թաղի ուսուցչական խումբը մի ներկայացում տուեց Ղալա թաղի բեմում։ Խաղացին Մուրացանի «Ռուզանը», որը շատ անաջողանցաւ։ Դերակատարները ոչ խաղալու ընդունակութիւն ունէին և ոչ էլ դերերը գիտէին։ Մուտքը բաւարար էր։

Իբ.

ՆԱՄԱԿ ՈՒՐՄԻԱՅԻՑ

—

14 յուն. 95

Ինչպէս կարդացինք «Շաւղի» 48 թւի մէջ, այստեղ է այժմ առաջնորդական փոխանորդ—գործակալ տէր Գարեգին Պօղոսեանը։ Նա գործակալ է Ուրմիոյ կրթական գործերի վրայ։ Ես. բայց ցաւ ի սիրտ պիտի յայտնել որ չը կան ուսուցիչներ Ուրմիոյ ոչ մի հայ գիւղում՝ օրինակ Կէրտապատ որը գրեթէ բոլորն էլ հայաբնակ է, մնացել է առանց ուսուցչի։ Նախիջևան-թէփէ նոյնպէս առանց ուսուցչի, Բաղլբոյ չունին ուսուցիչ, միայն Դավթէժու ամերիկացի միսիոնարները ուղարկել են իրանց ընթարցաւարտ աշակերտներից մէկին։ Նոյնպէս և առանց ուսուցչի են մնացել Թումաթար, Քուբա, Բանարշ և այլն հայ գիւղերը, որոնք չափազանց կարօտ են ուսուցչի։ որովհետև ծախս չունին շատերը որ իրենց զաւակները ուղարկեն այս կողմ այն կողմ կրթելու։ Ահա այսպէս թափուր, խեղճ վիճակի մէջ են Ուրմիոյ կրթական գործերը։ Հրաւիրում ենք գործակալ—փոխանորդի լուրջ ուշադրութիւնը այս խնդրի վրայ։

«Շաւիղը» մեծ յուզում է առաջ բերել իր 48 համարի առաջնորդողով և Ուրմիոյ թղթակցութիւնով, Ուրմիոյ խաւարամիտների շրջանում։ Արդէն խաւարամիտներին և իրենց առաջնորդողներին սահմանուած մի օրէնք է որ միշտ զզվում են ճշմարտութիւնից և նրա գոյութիւնը նկատելու թշուառութիւնն ունին։ բարկութիւնից քիչ է մընում որ պատառին երբ իրենց կամ իրենց առաջնորդողների կեղտոտութիւնները, ժէզուիտութիւնները երևան են գալիս և մտրակվում են հանրօգուտ ճշմարտութեան մտրակով։ Հոգ չէ, «Շաւիղը», յոյս ունենք, որ կը շարունակի իր բռնած ճշմարիտ ընթացքը, թող որքան ուզեն խաւարամիտները դիմեն միայն իրենց յատուկ ստորաքարշ միջոցների։ Ճշմտրտութիւնը ճշմարտութիւնէ, դա մի ակնյայտնի իրականութիւնէ, իբրև մի երկաթէ փուշ նրանց աչքի առջև։ իսկ ընդհակառակն մենք ուրախում ենք և յայտնում ենք մեր շնորհակալութիւնը ամենայն սրտով ու ազնիւ զգացմունքով, յարգելի «Շաւղի» խմբագրութեան։ Այժմ քաղաքս վարակուած է դիֆտերիտով, օր չէ անցնում առանց 1—2 տղայ մեռնելու, լսվում են տներից աղեխարշ, աղէկտոր ձայներ և եթէ այսպէս շարունակի մի կամ երկու շաբաթ, քաղաքս ընկճուած կը լինի դիֆտերիտի մահացու ու զարհուրելի ճիրանների տակ։

Մի լուրջ ու համեստ խորհուրդ կը տայինք Ուրմիոյ թէ հայ և թէ ասորի ազգաբնակութեան. որ երկուսից՝ էլ մի ժողով կազմուի, որտեղ ամենայն հեշտութեամբ կարող են խորհել ու մշակել դիֆտերիտի առաջն առնելու ծրագիրն. ահա այժմ շատ լաւ ժամանակ է որ մեր Ուրմիոյ հայ վաճառականները դրդուած ազգասիրական ու մարդասիրական զգացմունքից, օգնեն իրանց խեղճ ազգակիցներին, որոնցից շատերը չունեն դրամ անգամ, բժշկական պատուերների ու դեղերի գինը վճարելու։ Եթէ ուզեն այստեղի վաճառականները, կարող են մի մեծ գումար հաւաքել ու բաժանել աղքատներին։ Ուսումնարանն էլ փակւի մինչև մի ժամանակ. ու բոլորովին արգելւի երեխաներին փողոց դուրս գալը և եթէ մի տան մէջ սկսում են յայտնուիլ հիւանդութեան նշաններ, անմիջապէս յայտնեն այստեղ գտնուող ամերիկացի բժշկին, որը ամենայն դէպքում պատրաստ է օգնելու. հրաւիրում ենք ուսուցչի ուշադրութիւնը։

Այս տարի այստեղ մտադրութիւն կայ ս. Վարդանանց տօնին մի հանդէս ներկայացնելու. շատ ցանկալի կը լիներ այդ Ուրմիոյ հայ ժողովրդի համար, որը իր կեանքում առաջին անգամ միայն կը լսէր Վարդանի անունը. թէ ով էր նա։ Այս օրերումս արդէն պատրաստութիւն տեսնուել է նոր ուսուցչի կողմից. ամենայն սրտով մաղթում ենք յաջողութիւն իր մտադրութեան մէջ։

Յ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թէհրան 30 յուն. 95

Շատ ժամանակ է, 3—4 ամիս կը լինի որ անցել է իմ գրած մի փոքրիկ նամակից։ Մինչև հիմա մենք անհամբեր սպասում էինք, որ մեր դպրոցը բացուի, բայց մեր փափագին չարժանացանք։ Մեր դպրոցը փակ մնաց և դա մի մեծ ամօթ է բերում մեր ծնողներին։

Ափսոսում ենք. չը գիտեմ այստեղի հայերը երկպառակութիւնից ինչ օգուտ են քաղել, բացի մշտական վնասներից։ Այդ անմիաբանութիւնը չի՞ որ մեզ պէս մանուկներին զուրկ է թողնում ուսումից։ Կան անձնաւորութիւններ, որ ուսման յարգը ճանաչում են, բայց մենակ են և քիչ, իսկ նրանք որոնք ուսման ճաշակ չունեն, ասում են. «աղջիկը ինչ կանի ուսում». այդպէս ասողները շատ են։ Ես չեմ սիրում այդպէս ծնողներին, որ իրենց աղջիկներին ուզում են տգէտ պահել. ինչու, աղջիկը մարդ չի՞։ Մի ամիս սրանից առաջ Հայկազեան վարժարանում երեկոյթ կազմուեց. վարժապետը ուզեց որ երգեցողների մէջ օրիորդներ էլ լինէին, շատ ծնողներ չը թողին իրենց աղջիկներին, որովհետև վարժուհի չը կար. վեց փոքրիկ աղջիկներ հազիւ եղան, բայց ինչեր ասես չեն խօսում այդ աղջիկների վրայ։ Խեղճ աղջիկ—զաւակ, չեմ իմանում ինչի է այդքան հալածուած, թշուառ. ինչ մեղք է գործել որ սկի մարդի տեղ էլ չի հաշուում։

Էհ, ասենք մենակ մենք խօ չենք. այստեղի ժողովուրդը վատն է. եթէ լաւը լինեն, ինչու՞ պէտք է այստեղ եկող ուսուցիչներին կամ վարժուհիներին բանբասեն։

Խնդրում եմ խմբագրութեան որ ների աւել-պակասին, ուղղի մի քիչ էլ իմ սխալները, թէ որ ունեմ։ Խնդրում եմ, որ իմ այս փոքրիկ նամակին էլ «Շաւիղի» մի անկիւնում տեղ տայ։

Թագուհի Ս. Վարդանեանց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այս համարից սկսած «Շաւիղը» շարունակ կը ստանայ իր սեփական հեռագիրները, որով ամեն շաբաթ կարող կը լինի հաղորդել արտաքին ամենանոր լուրերը։

—

Չորեքշաբթի ,փետր. 1ին, կէսօրվայ ժամը 1-ին մայրաքաղաքս մուտ գործեց արքայավայել շքեղութեամբ ռուսաց արտաքոյ կարգի դեսպան գեներալ Կուրապատկինը։ Ընդունելութիւնը շատ հանդիսաւոր էր։

—

Երէկ, ուրբաթ, ժամը 1-ին, ռուսաց արտաքոյ կարգի դեսպան գեն. Կուրապատկինը ներկայացաւ Վեհափառ Շահին և Թագաժառանգին։

—

Լսում ենք, որ Թեհրանում բնակուող մի քանի հարուստ հայեր կազմել են իրենց մէջ մի ընկերութիւն, որի նպատակն է գոյացնել մի ֆոնդ և նրա տոկոսովը օժանդակել Դարվազա Ղազվինի Հայկազեան դպրոցին։ Ցայտնում ենք մեր ուրախութիւնը այդ գովելի ձեռնարկութեան համար։ Ցոյս ունենք որ, կը շարունակեն գոյացնել մի այնպիսի գումար, որի տոկոսը հէնց կարողանայ մշտնջենապէս ապահովեցնել ուսումնարանը։ Այդ ընկերութեան մանրամասնութիւնները եկող անգամ։

—

Այս համարում մի անգամ ևս տպում ենք մի հայ աշակերտուհու գանգատը Թէհրանում գտնուող միակ օրիորդաց դպրոցի փակման համար։ Ցոյս ունենք սակայն, որ այս տարուայ մի քանի հարուստ անձերի արած ջանքերը եկող տարի օրիորդաց դպրոցն էլ պիտի բացուի։

—

Հայկազեան վարժարանի ուսուցիչները սկսել են աշակերտներին տանել քաղաքումս գտնուող գործարանները այցելելու, նրանց գործնականապէս ծանօթացնելու համար արուեստագիտական աշխարհի հետ։ Ուրախալի է տեսնել, թէ ինչպէս գործարանների մէջ նրանց ամենքը բացատրութիւններ են տալիս և ուսուցիչները խօսում են նրանց արուեստների ծագման և զարգացման մասին։

—

Սպահանից ստացուել է լուր հեռագրով, որ Այվատեան վարդապետը ճանապարհ է ընկնում Թէհրան գալու, «ազգային գործերը կարգի դնելու» համար։

—

Այս համարի մէջ տպում ենք Թավրէզից եկած մի մասնաւոր նամակից մի քանի կտոր։ Նամակագիրը խնդրում է իր բարեկամից ճնշում չը գործել «Շաւիղի և թողնել որ թերթը դուրս բերէ Լիլավայի թաղի հոգաբարձուների պատկերը։ «Շաւիղի» վերայ ճնշում գործել ոչ ոք չէ կարող և եթէ մեզ ուղարկում են թղթակցութիւններ, որոնցում, նոյն իսկ յականէ անուանէ շամփրեն հասարակական միազմներին, խմբագրութիւնը տպում է և պիտի տպագրի։ Թող լիշեն միշտ մեր ընթերցողները № 43-ի մեր մի առաջնորդողի սոյն խօսքերը, որոնք մեր ուղղութիւնն են բացադրում. «Ձեռնպահ մնալու սովորութիւնը նա («Շաւիղը») չի ունենալ այնպիսի խրնդիրների մէջ, ուր՞ նրան թոյլատրուած է իր քուէն դնելու։ Եւ նա անկեղծօրէն կը դնէ իր քուէն»։ Ճնշել և ստել տալ «Շաւիղին» անհնար է։ Մենք տպում ենք թղթակցութիւնները սակայն իրենց գրողների պատասխանատուութեան ներքոյ և եթէ նկատեցինք մի փոքրիկ ստութիւն նրանց ասածների մէջ երբ և իցէ, այն ժամանակ թող այդպիսի թղթակիցը գրիչը ցած դնէ, նա իր վարկը կոտրած կը լինի ընդ միշտ մեզ մօտ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Սկսել ենք ստանալ Կովկասի հայ թերթերի առաջին համարները։ Որպէս տարուայ սկիզբ, այդ թերթերը աշխատել են հաշիւ տալ անցեալ 1894 թւի հայի կեանքի վերաբերութեամբ։ Բաւական լաւատես են և նրանց հաշիւներից երևում է որ անցեալ 1894 թիւը եղել է մի բաղտաւոր տարի։

«Մշակը» օրինակ. գտնում է որ «վերջին 1894 թւականը, որ յանձնեցինք պատմութեանը, մեր հասարակական կեանքի զարգացման մէջ կը բռնի պատկառելի տեղ։»

Թերթը գտնում է որ «հասարակական ինքնաճանաչութիւնը ստացաւ աւելի որոշ կերպարանք և որոշ գոյն» և ահա «Հասարակութեան լաւագոյն մասը յայտնեց, որ նա պահանջում է օրինականութիւն բոլոր գործողութիւնների մէջ, որ նա զզուել է կամայական գործավարութիւնից, որ նա կամենում է ղեկավարվել որոշ սկզբունքներով և թշնամի է մասնաւոր հաշիւներից բղխած գործողութիւններին, որ նա պահանջում է հաշուետուութիւն և պատասխանատուութիւն իր բոլոր գործողներից, որ նա սաստիկ զայրացած է այն խաւար արշաւանքի դէմ, որ ձգտում է կեղծել գիտութիւնը, աղաւաղել կրթական գործը և ժողովրդի բարոյական ղեկավարութիւնը յանձնել տգէտ հովիւների»։

Որ 1894 թւականը ունեցել է առիթներ պարզօրէն արտայայտելու համար հայի հասարակական ոգին, դա ճիշտ է։ Սովը, մեր հեռաւոր եղբայրների գոր-

ծերի դրութիւնը՝ այդ տուիթներն էին։ Բայց չը մխիթարւենք որ մի քանի հազար ռուբլիներ ենք բաժանել մի քանի տասնեակ հազար սովամահ եղբայրների, որովհետև այդ փողերից բաւական մասը կամ իր նպատակին չէ հասել, կամ անօգուտ է՝ եղել և կամ աւելի վնասել է։ Մենք չենք կամենում մանրամասնութիւնների մէջ մտնել. թւել թէ ինչ եղաւ Երզրում ուղարկուած գումարը, Էջմիածնում ռուբլի առ ռուբլի բաժանուածի օգուտը, այս և այն վարդապետների՝ ձեռքով բաշխուածների արդիւնքը. ասել որ ամենակարևոր պարագայում փող ուղուած ժամանակ զլացան տալու (օրինակ Սասունից սովի ժամանակ ուղուած) և այդ արեցին այն մարդիկ, որոնց ձեռքն էր գումարվում հազարները... չը մտնենք մանրամասնութիւնների մէջ, որովհետև դրանք անցեալ են դարձեալ, բայց ինչ որ փաստ է, 1894 թուականը ցոյց տուաւ որ հայի մէջ եթէ կայ հասարակական ոգի, բարոյականը չը կայ պրակտիկական, փոքանքներից խրատուելու ընդունակութիւնը։ Ինչ որ «Շաւղի» այս համարի առաջնորդողումն էլ ասուած է, այդ այն է, որ հայը դեռ չը կարողացաւ առանց էր կղերի,—որ ոչ մի կերպով չէ զգնում իրան—ղեկավարել իր հասարակական գործերը։ Լրագիրների ժողոված և նբրանց տնօրինած հարիւրները աւելի օգտաւէտ եղան, աւելի խելացի կերպով ծախսուեցան, քան վանքերի մէջ գումարուող հազարները։

94 թիւը եթէ ապացուցեց մի գլխաւոր բան, այդ այն է, որ Կովկասի հայ հասարակութիւնը թէև ունի գիտակցութիւն, հաւաքական ոգու նշոյլներ, բայց ոչ թէ հաւաքական կամք կամ խելք։

**Նոր տարուայ տուիթով «Մշակն» էլ աւել է մի քանի նուէրներ. ահա նրանցից մի քանիսները, որոնք լաւ սուր են։

Էջմիածնի վանքին.—Մի երկաթէ կաստա զաղանի կողպէքով։

(Բացատրութիւն.—որ մէջի փողերը ամեն հասնող չը թռցնի։ Այս բացատրութիւնները մեր կողմից են)։

«Մշակի» խմբագրութեան.—20,000 բաժանորդ (Այդ դուցէ 25-րդ դարում տեսնես միայն. ջուղայի աչքը քոռանայ.)

Հայոց երիտասարդութեան. Քիչ խօսք շատ գործ։

Ընթերցողներին. Աչքներդ լոյս, «Պիրամիտները» այս տարի էլ կը շարունակվեն։ (Հ. Առաքելեանցի Եգիպտոսում արած ճանապարհորդութեան մասին է խօսքը, եթէ չենք սխալվում)։

Սեպտեմբեր Մանտինեանի. Շնորհաւոր նոր տարի, շնորհաւոր նոր պաշտօն բայց տես, բամբակդ չը գգեն։ (Այդ «նշարաւոր մանկավարժը» այժմ բամբակի առևտրով է զբաղվում. ինչ կայ, երևի մանկավարժութեան մէջ իր բուրդը շատ են գզել, այժմ բամբակի է ձեռք խփել)։

Այվազեան եպիսկոպոսին. 3333 տէջտ տիրացուներ. («Մշակը» ի զուր է անուն դրել, ուղղակի թող ասէր «բոլոր եպիսկոպոսներին»—դա աւելի ճիշտ կը լիներ)։

Ներսիսեան զարոյի հոգաբարձութեան. Մի մեծ աւել։ (Երևի «Շաւիղի» նուէր բուած վարժապետներին աւել դուրս ձգելու համար)։

Կուտանեանցին. Մի թամքած ձի (այդ պարոնը Էջմիածնի ճեմարանի տեսուչն է. մնչ է կարծում «Մշակը», աւելի յարմար չէր նրան տալ մի հանգստեան թոշակ Էջմիածնի... դասարկ դանձարանից)։

**«Մուրճ» ամսագրի անցեալ տարուայ վերջին համարը նոր մեզ հասաւ։ Մի պարարտ համարդ է, նկարներով հարուստ և բազմակողմանի։ Այդ համարի մէջ երևում են հայկական յայտնի գրողներն իւ բանաստեղծները։

Մնացակաս Ղազարիանցը, իր «Զարաբեր խարազան» պատմուածքով։ Շատ սիրուն է Լևոն Մանուէլեանցի «Ասում են պօէտ» բանաստեղծութիւնը։

Ասում են, պօէտ, ինչու քո քնար
Վազուց է էլ չէ հնչում մեզ համար.
Դուցէ մարեցան սրտիդ տենչերը
Ցամաքեց աղբիւրն ոգեորութեան

Քիչ յետոյ խորին դժնութեամբ է, որ նա պատասխանում է

...Եւ նա զոհ դարձաւ գիպտ Գողգոթայի
Ինչպէս տերը՝ հողմերին խանձուած
Ինչպէս նաւավար՝ ծովի ցոլքանքում,
Ինչպէս զինուոր՝ Աշնամուշ յաղթուած
Մի անհայրենի ճակատամարտում։

Այդպէս է, այո, մեր հասարակութիւնը. ճնշիչ է նրա օդը, ոգեորութիւնով և էնէրգիայով ծծուածները «զոհ են դառնում բիւր հայածանքների, ինչպէս մի զինուոր անհաւասար ճակատամարտում...» Յետոյ գալիս են Վ. Փափազեանցի երկու պատմուածքները «Զգայնաչափ» և «Ջիգտէ» և նոյն հեղինակի «Անգլիական նամակների» առաջին նամակը. սա խմբագիրն է, որ մի ամիսի «Ժամանակակից տեսութիւն» է անում։

Սիրուս որ Սարգիսեանցի «Խզճի խայթոցներ» պատմուածքի թարգմանութիւնը բարբարոսաբար է արուած, իսկ ընդհանրապէս ազգագրական սխալներ վիճում են ամեն երեսում։

Սմսագիրը խոստանում է ամիսը երկու անգամ հրատարակել, եթէ 1000 բաժանորդ ունենայ։ Որքան քիչ է խընդրածը, այդքան սակաւապէս խմբագիր գտնենք հնմարիա։ «Մուրճի» դոյութիւնը անհրաժեշտ է և շատ օգտակար միակ հայ կանոնաւոր ամսագիրն է, որին հարկաւորէ օգնել նիւթապէս։ Պարսկահայերը շատ քիչ բաժանորդ են տուել նրան, մեզ հաստերը զանազան քաղաքներից հայցնում են թէ հայերէն ինչ թերթեր բերել տան։ Բոլորին յանձնարարում ենք նաև այդ լուրջ ամսագիրը, պայմաններդ կարող են տեսնել մեր յայտարարութիւններում։

«Մուրճի» մէջ է որ կարդում ենք հետևեալ կարևոր լուրը

«Ճեմարանից արձակուած են մօտ 90 աշակերտ և երկու ուսուցիչ. հրաժարական տալով հեռացել է նաև մանկավարժութեան ուսուցիչ պ. Տէր-Միրաքեանց։ Նաև գիւղատնտեսութեան ուսուցիչ պ. Ամիանասեանը...»

Ինչու, ինչէ նշանակում նոքա, տարուայ կէսի այդ պաշտօնազրկութիւնները ու արտաքսումները։

Ինչպէս հոգի արտաքսել մի ուսումնարան-իդ մեն անտամեմ և փարը ի շատ կատարեալ ուսուցիչներն պատճառ դառնալ որ ատրայ կէսին հեռանան... Ցաւ կալի էր որ արտաքսուած աշակերտները զրկին մեզ թէ ինչեր են անցնում Էջմիածնում, մենք ուրախութեամբ կը ասքնք։

Վ. Ֆ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրները հաղորդում են, որ Կ. Պոլսի նորընտիր Հայոց պատրիարքը կարողացել է առել հայոց եկեղեցիներում վեհ. կաթուղիկոսի անդրանիկ այն գոնդակը, որ Աշրդեանի օրով արգիլած էր կարդալու։

—Կ. Պոլսի հայոց նոր պատրիարքը սկսել է մի գործունէութիւն, որ խօսանում է փայլուն լինել։ Վերջերումս նա հայ կաթուղիկների պատրիարք Ղարեանի այցելութիւն մեծել է ընդունել, նրա մի դատապարտելի արարքի համար։

—Էջմիածնի հայոց կաթուղիկոսը Իզմիրլեան պատրիարքին շնորհել է արքեպիսկոպոսութեան աստիճան։

—Կ. Պոլսի տաճկական «Հաբիրաթ» թերթը հաղորդում է որ «Վանի մէջ բանդարկուած 16 հայ դատապարտեալների համար տրուած վճիռները վճռաբեկ ատեանը հաստատեց և այդ դատապարտուածները ուղարկվելու են արտաքս»։

—Նիկոլ Ֆոր ընտրուած է Ֆրանսական հասարակապետութեան նախագահ։ Ընտրութեան ժամանակ սոցիալիստները զոռացել են «փ բաց աւազակները»։ Կազմել է նոր մինիստրութիւն։ Նոր մինիստրութեան, որի խորհրդի նախագահը Բիրօն է (մինիոն ժամանակ և Փինանսների մինիստր) ձեռք առած առաջին միջոցը հանդիսանում է այն, որ նա պատգամաւորների ժողովին առաջարկ է անում ներումն շնորհել բաղաքական յանցանքների համար։

—Կ. Պոլսի «Հայրենիք» թերթից քաղում ենք հետևեալը։ Պաշտօնական Զեկուցում. Դ. զօրաբանակին հրամանատարը եւ Պիթլիսի կենտրոնութիւնը ծանուցած են թէ քիւրտ հաղուստ կրող երեք հայեր, սպանելու դիտաւորութեամբ վիրաւորած են Ս. Բարսեղ քահանան, որովհետև սա իմաց տուած էր թէ Մուշի մէջ հայոց վարժարանին շրջակայքը վնասակար թուղթեր կան եւ առաջնորդած էր անոնց գրաւմանը. թէ Սիլոթի մէջ հինգ հայեր կողոպտած են վաճառական Պողոս էֆէնտիի զոյքերն ու դրամները. թէ Մուշի շրջակայքը քիւրտի հաղուստով հայ մը ձերբակալուած է, եւ թէ ոստիկանութեան պաշտօնատան մէջ անոնց յայտարարութիւնները արձանագրուելով յանցաւորները յանձնուած են դատական իշխանութեան։

Ուստի կը ծանուցուի թէ պոնց նոյն իսկ իրենց քահանաներուն նկատմամբ ալ եղեռնական նպատակ մը ունենալը իրենց ուազակութեան ատիճանը կ'ապացուցանէ։

ՀԵԳԱԳԻՐՆԵՐ

Լոնդոն. փետր. 1|13 Չին-Ճապոնական պատերազմը սատկապէս շարունակվում է. Չինական 4 մարտանաւեր կուի մէջ ընկղմել են 13 ճապոնական սատիկ վնասուել, իսկ մնացեալը ընկել ճապոնացոց ձեռքը,

Լոնդոն. փետր. 4|16 Չինական ամիրալ (ծովապետ) Տինգը մի պատգամաւորներ ուղարկեց ճապոնական նաւատորմի հրամանատարին խնդրելով առաջարկելով եթէ խոստանան լաւ ուսումնարանում ընդունուելի, գիւղերնին հատուցանելի կեանքի համար։

„ՇԱՒԻՂԻ" ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Դավրէժ. Ընթերցասիրաց ընկ. վարչութեան։ Մեր ցեալ 6 դասը ուղարկեցէք նամակագրոյնով։ Դավրէժում գործակալ չունինք, ուստի այսուհետև ուղղակի մեզ գիմէք։ Ձեր հին յայտարարութիւնը կը տպի երկու անգամ ևս. սխալմունք է եղել. ներեցէք։ Խմբագրութիւնը դեռ ոչ մի նուէր չէ տացել ձեր ընդհանրոյթին։ Ձեր այս մեր զամուոյ հաշիւը իրը յայտարարութիւն ենք տպելու, ուրիշ կերպ չենք կարող. հաշիւները կարող ենք միմիայն յայտարարութիւն դնել։

Դավրէժ. Իբր. Զարունակեցէք ուրել մեզ թղթակցութիւններ։ Շնորհակալ ենք, եղէք միշտ այնպէս, ինչպէս որ խոստանում էք։

Թէհրան. Մ. Բ. Ասում էք որ Դարբանդ Զազվինի երեցփոխը բարկացել է որ իրանից հաշիւ են պահանջել և յայտնել է որ եկեղեցին բաց է և ամէն մի բոպէ կարող է հաշիւ տալ։ Բարկանալը աւելորդ է, բայց եթէ կարող է հաշիւ տալ, թող ուրեմն հաշիւը բերէ յանձնի տպագրելու որ բոլորն էլ կարդան. ինչու է թաղցնում նրան։

Թէհրան. Հին. Դուք ինչու էք բարկացել որ ընդհանրայանի հաշիւն են պահանջում։ Բարկանալը առողջութեան վնաս է. եթէ խօսք ունէք տալու, գրեցէք մենք կը տպագրենք, բայց ամենից լաւ խօսքը ձեր ուած հաշիւը կը լինի։

Դավրէժ. Հ.ին. Ձեզ մաքուր ցոյց տալու համար ինչու էք աշխատում կեղտ շպրտել ուրիշի վրայ։

Դավրէժ Ա.ին. Դիմէք Գեոթէն ինչ է ասել «աշխարհիս ամենամեծ զորերը յիմարներն են որոնք զորանում են համբերութիւնդ և ժամանակդ»։

Ուրմիա. Յ. Ձեր թղթակցութիւնը տպվում է, շարունակեցէք. շնորհակալ կը լինենք։ Լուրերի ճշմարտութեան պատասխանատուութիւնը ձեզ ենք թողնում և յոյս ունինք որ մեր հաւատը ղէպի ձեզ, չէր խախտիլ։

Սպահան. 5762. Ինչու էք այդքան զոռում աղաներից, որ մինչև իսկ թուերի տակ էք թաղնվում. ճակատ ունեցէք. աւելի լաւ է հրապարատութեամբ և ճշմարտութեամբ մեռնել, քան ստորութեամբ ապրել։

Ուրմիա. օր. «աշակերտուհուն»։ Կը տպենք. Ձեր յօդուածի առաջին մասը շատ լաւ է։

Ծրնէվ. Դ. Խաժակնան. Խնդրում ենք մեզ գրել ձեր ուսանողական գրադարանի հասցէն։

Լէյպցիգ. Ս. Թառայեան։ Թերթեր ուղարկել ենք ձեր հասցէով, յայտնեցէք մեզ գրադարանի հասցէն։

Խմբագիր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ